

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԻՐՔԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՄԵՋ

Պրոֆ. ԶՈՒԼԻԱՆՈ ԲՈՆՖԱՆՏԵ (Հոռմ)

Տարածական լեզվաբանությունը (նեոլինգվիստիկա) շատ ինքնատիպ լեզվաբանական ուղղություն է: Այն հենվում է մի կողմից՝ Բ. Կրոչերի իդեալիստական փիլիսոփայության, մյուս կողմից՝ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների վրա (Ժիլյերոն): Տարածական լեզվաբանությունը դեռևս չի հնացել, բայց դեռ չի տվել սպասված արդյունքներ: Դա իդեալիստական ուղղություն է այն իմաստով, որ ջանում է ոչ միայն խմբավորել փաստերը, որն ինքնին շատ օգտակար և ուշադրության արժանի գործ է, այլև հասկանալ, իմաստավորել դրանք: Տարածական լեզվաբանության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ որևէ լեզվում, բարբառում և կամ տարբեր տարածքներում առկա երկու՝ առավել կամ պակաս չափով համանիշ կամ համարժեք, այսինքն՝ նույն գործառնությունն ունեցող հնչյուններից, ձևերից կամ բառերից մեկը հին է, իսկ մյուսը՝ նոր, նորակազմություն, այսինքն՝ լեզվական ստեղծագործություն, ինչպես այն հասկանում է Կրոչեն: Այսպես օրինակ՝ գերմաներենում «զլուխ» նշանակությամբ գործածական են և՛ Haupt, և՛ Kopf բառերը, բայց դրանցից հինը Haupt-ն է (հմմտ. լատ. caput): Հնդեվրոպական որոշ լեզուներում «մարդ» նշանակությամբ գործածական է homō բառը՝ «հողեղեն» (հմմտ. humus), իսկ այլ լեզուներում՝ brotós «մահկանացու»: Մենք կտեսնենք, որ թե՛ տարածքային ընդգրկման առումով և թե՛ այլ պատճառներով homo-ն ավելի հին է քան brotós-ը: Նույնը կարելի է ասել նաև centum/satēm զուգաբանության մասին. centum տիպի լեզուները ավելի հին են, քան satēm լեզուները: Դա նշանակում է, որ հնդեվրոպական բոլոր լեզուները սկզբնապես եղել են centum, իսկ satēm հատկանիշը նորաբանություն է:

Տարածական լեզվաբանությունը ունի մի քանի տարածքային սկզբունքներ, որոնցից ես կներկայացնեմ միայն երեքը և կբերեմ համապատասխան օրինակներ ռոմանական լեզուներից, քանի որ դրանց բոլորի ընդհանուր աղբյուրը՝ լատիներենը, քիչ թե շատ հայտնի է մեզ:

Առաջինը մեկուսացած տարածքի սկզբունքն է (սա, իհարկե, չի նշանակում, թե այն անպայմանորեն պետք է կղզի լինի). մեկուսացած տարածքներում պահպանված ձևերը, իբրև կանոն, ավելի հին են:

Օրինակ՝

Սարգինիա	Իսպանիա	Գալիս	Իտալիա	Դալիա
equis	caballus	caballus	caballus	caballus
kena	čena	čena	čena	cena

Equus ձևը (Սարգինիայում՝ ebbu) ավելի հին է, քան caballus-ը, որն առկա է ռոմանական լեզուների մեծ մասում (ես կիրառում եմ Բարտոլիի մեթոդը. ասելիքս ավելի պարզ դարձնելու նպատակով բերում եմ և՛ նորակազմ, և՛ նախնական ձևերը): Պետք է նշել նաև, որ մինչև V դարը այդ բառի լատինական արտասանությունն էր kēna, իսկ իսպանիայում, իտալիայում, Դալիայում այն հնչում է čena:

Երկրորդը եզրային տարածքի սկզբունքն է. եզրային տարածքներում առկա ձևերը ավելի հին են, քան կենտրոնական տարածքներում հանդիպողները:

Օրինակ՝

Իսպանիա	Դալիա	Իտալիա	Դակիա
tunc	ad illam hōram		tunc
equa	iūmentum	caballa	equa
magis fortis	plus fortis	plūs fortis	magis fortis

Ad illam hōram ձևը նորակազմություն է (այս ձևից են առաջացել Ֆրանսերեն alors, իտալերեն allora). եզրային տարածքներում՝ իսպանիա, Դակիա, պահպանվել է հին լատինական tunc ձևը: Կենտրոնական տարածքում կարող են լինել մի քանի նորակազմություններ. օրինակ՝ iūmentum, caballa: «Եզրային տարածքները» ունենում են միայն մեկ ձև:

Երրորդը «մեծ տարածքի» սկզբունքն է. որպես կանոն մեծ տարածքում պահպանվում են հին ձևերը:

Իսպանիա	Դալիա	Իտալիա	Դակիա
ouis	ouis	pecus	ouis

Այս սկզբունքների կիրառության անհրաժեշտ և էական պայման է նրանց հերթականության պահպանումը, մի բան, որ հաճախ անտեսվում է շատ գիտնականների կողմից: Սա նշանակում է, որ երկրորդ սկզբունքը չի կարող կիրառվել, եթե այն հակադրվում է առաջինին, երրորդը չի կարող կիրառվել, եթե հակադրվում է առաջին երկուսին: Այլ կերպ ասած, «եզրային տարածքի» սկզբունքը չի կարելի կիրառել, եթե կենտրոնական տարածքը մեկուսացած է (օր.՝ Սարդինիան). «մեծ տարածքի» սկզբունքը չի կարելի կիրառել, եթե փոքր տարածքը մեկուսացած է կամ արդյունք է երկու եզրային տարածքների: «Եզրային տարածքները» (այս հարցում ես համամիտ եմ Ա. Դոդայի հետ) կարող են լինել «բեկված տարածքներ»:

Ակնհայտ է (առնվազն ինձ համար), որ նորաբանությունների տարածքները պետք է սահմանակից լինեն, որովհետև նորաբանությունը տարածվում է առանց ընդհատման: Եվ, ընդհանրապես, եզրային, ինչպես նաև բեկված տարածքները սովորաբար ընդմիջվող են:

Եզրային տարածքները կարող են ընդգրկել պայտաձև տարածք. սա պետք է ավելացնել Բարտոլիի սկզբունքներին:

Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա
 Ա Ա Բ Բ Բ Բ Ա Ա
 Ա Ա Բ Բ Բ Բ Ա Ա

Այստեղից երևում է, որ Բ-ն կենտրոնական՝ նորաբանությունն ընդգրկող տարածքն է, որը, թեթևակի հյուսիս շարժվելու դեպքում կարող է դառնալ եզրային տարածքի կիրառության օրինակ:


ԱԱԲԲԲԲԱ
 ԱԱԲԲԲԲԱ
 ԱԱԲԲԲԲԱ

Այլ կերպ ասած, պայտաձև տարածքը եզրային տարածքի սաղմն է:

Մեկուսացած տարածքների կապակցությամբ անհրաժեշտ է ասել նաև հետևյալը. քանի որ մենք ստույգ չգիտենք հ.-ե. լեզուների աշխարհագրական տեղաբաշխումը նախահայրենիքում, ուստի չենք կարող օգտագործել աշխարհագրական միջոցներ (կղզիներ, լեռներ և այլն) «մեկուսացած տարածքը» բնորոշելու համար: Այդ պատճառով էլ ես շրջել եմ բնորոշումը՝ այն տարածքը, որտեղ այլևայլ պատճառներով պահպանվել են հնագույն ձևեր (100:1 հարաբերությամբ) դիտում եմ որպես մեկուսացած տարածք (վերը նշված դեպքերում այդպիսիք են լատիններենը և որոշ չափով նաև կելտերենը):

Նշված սկզբունքները, հակառակ որոշ գիտնականների կարծիքի, կիրառելի են բոլոր՝ մեռած, թե կենդանի, լեզուների ու բարբառների, այդ թվում նաև հ.-ե. վերականգնված նախալեզվի նկատմամբ:

Բոլոր գիտնականներն էլ աջն կարծիքին են, որ հ.-ե. լեզվով խոսող ժողովուրդը նախապես գրավել է շատ ավելի փոքր տարածք, քան այժմ, և որ շատ երկրներում, որոնք հետագայում զբաղեցվել են հ.-ե. լեզուներով խոսող ժողովուրդներով, հնդեվրոպացիները հաստատվել են հարաբերականորեն ավելի ուշ՝ փոխարինելով այլ ժողովուրդների (այստեղից էլ՝ կելտերենը, լատիններենը, իտալերենը, հունարենը, խեթերենը, հնդարիական լեզուները և այլն): Այս՝ սկզբնապես փոքրիկ տարածքից, կարծեք պայթյունի հետևանքով, անջատվել են հ.-ե. լեզուները, այնպես, որ գրավել են նախնական դիրքին համապատասխան տեղ:



Այսպիսի հայեցակետը հնարավոր է դարձնում տարածական լեզվաբանության սկզբունքների կիրառությունը:

Բերենք օրինակներ եզրային տարածքներից:

«Օր» բառի՝ հ.-ե. լեզուներում ունեցած համապատասխանությունների պատկերը հետևյալն է.

գերմ. diēs	բալթ. diēs	սլավ. diēs	թու. —
կելտ. diēs	ալբան. diēs		
լատին. diēs	իտալ. diēs	հուն. ēmar	հայ. ēmar
		իբրան. diēs	հնդարիական diēs

Այս օրինակը կարելի է բերել նաև մեծ տարածքի համար:

Հայերենում կան և՛ ար, և՛ տիւ ձևերը:

Նման պատկերի ենք տեսնում նաև հետևյալ օրինակում.

գերմ. somnus	բալթ. somnus, somniaum	սլավ. somnus, somniaum	թու. A şpañ B şpane
կելտ. —	ալբ. —	իբրան. —	հնդարիական —
լատին. somniaum	իտալ. ?	հուն. ōneiros	հայ. ōneiros
		իբրան. somnus	հնդարիական somnus somniaum

Նորաբանություն են հուն. ōneiros, այբ. գեգ. âdërrë, տոսկ. ëndërrë, հայ. անուրջ:

Բերենք մեկ այլ նման, բայց ոչ նույնական օրինակ.

գերմ. nouem	բալթ. nouem	սլավ. nouem	թու. nouem
կելտ. nouem	ալբ. nouem		
լատին. nouem	իտալ. nouem	հուն. ennëa	իբրան. nouem
		թրակ. ennëa	հնդարիական nouem
		հայ. ennëa	

Այս օրինակում ձայնավոր նախահավելված է առկա հունարեն, թրակե-րեն և հայերեն լեզուներում:

Նույն ձևով ձայնավոր նախահավելված ունեն նաև անուն (հուն. ōnoma փոյուգ. onoman, հայ. անուն) (մնացած լեզուներում առկա են nōmen ձևին հանգող բառեր), այր՝ հուն. anēr (վեդ. nār- և այլն), ատամն՝ հուն. odōn.

Հայերեն երկու և երեք բառերի դիմաց հունարենի treis և dyo ձևերի գոյությունը չի հակասում մեր ասածին, քանի որ նորաբանությունը, ինչպես արդեն ասել ենք այդ մասին, տարածվելով կարող է ընդգրկել տարբեր բառեր տարբեր ձևերով:

Հետաքրքիր է իմ, ինձ բառերի՝ հ.-ե. տարբեր լեզուներում ունեցած համապատասխանությունների քննությունը.

գերմ.	բալթ.	սլավ.	թուր.
meus	meus	meus	meus
			{ni < man!}

կելտ.	ալբ.
meus	emōs

լատին.	իտալ.	հուն.	հալ.	իրան.	հնդարիական
meus	meus	emōs	emōs	meus	meus

Հունարենը (emōs), հայերենը (իմ, սեռ. իմոյ), ալբաներենը (գեգ. i em, տոսկ. im < i+em) ունեն ձայնավոր նախահավելված, որն առկա է նաև լիդիերենում, հիերոգլիֆային և սեպագիր խեթերենում: Հունա-հայկական զուգաբանություն է *mē բառը՝ հուն. emé, emoī, հայ. իս, ինձ (գործիական հոլովածին է ինեւ < *emebhi), այս բառի ալբաներենի ձևն է mua:

Հ.-ե. s > h հնչյունափոխությունը բառասկզբում և միջձայնավորային դիրքում նույնպես կենտրոնական տարածքին բնորոշ նորաբանություն է, բայց ալեյի լայն տարածում ունի, քանի որ ընդգրկում է նաև փոյուգերենը և իրանական լեզուները: Ալբաներենում, որը գտնվում է ալդ նորաբանության տարածման սահմանագծում, այն արտացոլվում է երկակի՝ և՛ իբրե Ֆ. և՛ իբրե հ (կամ, ինչպես կարծում են որոշ գիտնականներ, այստեղ հավանաբար առկա է երկու լեզուների խաչաձևման երևույթ):

գերմ.	բալթ.	սլավ.	թուր.
s	s	s	s

կելտ.	ալբան.
(h)	s h

լատին.	իտալ.	հուն.	հուլ.	փոյուգ.	իրան.	հնդարիական
s	s	h	h	h	h	s

Կելտերենը նույնպես ունի h, բայց լավատեղյակ գիտնականների կարծիքով այն անկախ զարգացման արդյունք է:

Ե՛վ հունարենում, և՛ հայերենում s-ն բառասկզբի դիրքում հաճախ ընկնում է. հայ. նու, սեռ. նուոյ, հուն. nyōs, հնդարիական snusā և այլն *:

Ալբաներենում այն արտացոլվում է մերթ իբրեւ s (Տի առնձրեւ, հուն. hýei), մերթ՝ th (thi «խոզ», հուն. hys, լատ. sus), մերթ՝ ցj (gjarpēr «օձ», հուն. hérpei, լատ. serpens, վեդ. sarpati), մերթ՝ h, ինչպես հայերենում և հունարենում (helq «նկարում եմ», հուն. hélkei, լատ. sulcus. «ակոս»), որոշ դեպքերում էլ այն ընկնում է, ինչպես հայերենում և հունարենի մի քանի բարբառներում. ùl «աստղ», հին իուլ. sūil «աչք», հուն. hēlios, լատ. sol և այլն:

Կենտրոնական տարածքի նորաբանություն մեկ այլ օրինակ է «այր» բառը, որը տարածվել է թե՛ դեպի արևմուտք, թե՛ դեպի արևելք:

	դերմ.	բալթ.	սլավ.	թուր.
	uir	uir	—	uir
լատին.	կելտ.	ալբ.	իրան. և հնդարիական	
uir	uir anēr	anēr		
	իտալ.	հուն.	հայ.	
	uir anēr	anēr	anēr	

Այս նորաբանությունը նկատվում է կելտական, իտալական և հնդիրանական տարածքների մի մասում: Բայց լատիններենը, իբրեւ մեկուսացած տարածք, ունի միայն uir ձևը. այդպես է նաև գերմանական, բալթիական և թուխարական լեզուներում (սլավոններենում առկա է առեղծվածային celovekŭ նորաբանությունը):

Շատ կարևոր զուգաբանություն է «ձեռք» բառի անվանումը, որն ընդգրկում է հունարենը (xeir) հայերենը (ծեռն) և ալբաներենը (dorë), Այս համապատասխանությունը շատ կարևոր է, քանի որ ինչպես նշել եմ «Mélanges Bally»-ում (1939), «ձեռք»-ի անվանումը կրոնական արգելքի (տաբու) պատճառով շատ լեզուներում փոփոխվել է. լատ. manus, անգլ. hand, ռուս. рука և այլն:

Նույն ձևով, երբայլ բայը պահպանվել է միայն հունարեն (érk'omai), ալբաներեն (erdha) և հայերեն (երթամ) լեզուներում: Մնացած լեզուներում առկա են *ei- արմատին հանգող ձևեր (հուն. ունի նաև eĩmi, լատ. ire և այլն):

Մեկ այլ օրինակ. դա «լինել» բայի արմատն է, որը միայն հունարենում (phītu), ալբաներենում (գեգ. bīn- «բողբոջում է») և հայերենում (բոլս, սեռ. բուսոյ) է պահպանվել «բույս» նշանակությամբ: Մյուս լեզուներում, մասամբ նաև հունարենում, այն կազմում է *es- արմատի կատարյալի ձևերը (հին սլավ. jesmi, bylŭ): Բայց ես անվերապահորեն չեմ ընդունում այս զուգաբանությունը, քանի որ իմաստային կողմը որոշակի կասկածներ է հարուցում:

Բերենք եզրային տարածքի մեկ այլ օրինակ.

գերմ. sumus	բալթ. esmén	բալթ. esmén	սլավ. esmén	թոխ. ?
		ալբ. esmén		
	կելտ. esmén	հուն. esmén	հայ. esmén	իսկ. esmén
լատին. sumus	իտալ. ?			իրան. sumus
				հնդարիական sumus

Այսինքն՝ որոշ լեզուներում «լինել» բայի հոգնակի առաջին դեմքի կաղամության ժամանակ բառասկզբում առկա է ձայնավոր նախահավելված (սա նորաբանություն է), իսկ այլ լեզուներում այն սկսվում է բաղաձայնով (այս լեզուներն ավելի պահպանողական են): Հայերենն ունի հմֆ ձևը:

Երբեմն նկատվում է նորաբանությունների՝ դեպի արևելք տարածման միտում. ընդհանրապես նորաբանությունները ավելի հեշտորեն տարածվում են արևելյան տարածքի լեզուներում, ի հակադրություն արևմտյան տարածքի լեզուների: Այս է պատճառը, որ արևմտյան լեզուները՝ լատիներեն, կելտերեն, գերմանական, ավելի արխաիկ են. այս կարծիքն են հայտնել Ա. Մեյեն և Բարտոլին՝ հակառակ նախկինում գոյություն ունեցած համոզման:

Այս միտքը հաստատելու համար բերենք հետևյալ օրինակը. հ.-ե. *Օ-ի արտացոլումը տարբեր լեզուներում:

գերմ. ǣ	բալթ. ā	սլավ. ā	թոխ. ā	Օ
կելտ. ō ǣ	ալբ. ā			
լատին. ō	իտալ. ō	հուն. ō	հայ. ō ā	իրան. ā
				հնդարիական a

Այս զուգաբանությանը ես անդրադարձել եմ վերջերս մի հոդվածում, ուր նշել եմ, որ արևմտյան որոշ լեզուներում, ինչպես նաև թոխարերենում, առկա են *Օ-ից ծագած a, և առանց փոփոխության պահպանված o, հնարավոր էլ չէ իմանալ պահպանման պատճառները: Դեռևս հ.-ե. լեզվում այս Օ-ի, ինչպես նաև նրանից ծագած a-ի հարցը բավական խճճված, անորոշ է:

Այս դեպքում հունարենը, ամբողջությամբ վերցրած, նմանակում է արևմտյան խմբի լեզուներին՝ ցուցաբերելով պահպանողականություն: Հայե-

րենը, դանվելով երկու տարածքների (արևմտյան և արևելյան) սահմանագծում, ունի և՛ հ.-ե. օ-ի պահանջան, և՛ *o > a անցման օրինակներ: Նույնպիսին է և հայտնի centum/satəm զուգաբանությունը¹:

գերմ. centum	բալթ. satəm	սլավ. satəm	թոխ. centum
կելտ. centum	ալբ. satəm		
լատ. centum	իտալ. centum	հուն. centum	իսթ. centum
		հալ. satəm	իբրան. satəm
			հնդարիական satəm

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, centum լեզուների նկատմամբ կիրառելի են եզրալին և մեկուսացած տարածքների սկզբունքները:

Տարօրինակ պատկեր է ներկայացնում «կրակ» բառի զուգաբանությունների բաշխումը.

	բալթ. ignis	
գերմ. Feuer	սլավ. ignis	թոխ. Feuer
կելտ. —	ալբ. —	—

լատ. ignis	իտալ. fuoco	հուն. πῦρ	իսթ. πῦρ	փոյուզ. πῦρ	հալ. Feuer	իբրան. —	հնդարիական agnis
---------------	----------------	--------------	-------------	----------------	---------------	-------------	---------------------

Բայց այս տարօրինակությունը կվերանա, եթե հետևելով վալդե—Պոկոնուն ընդունենք, որ սլավոններեն նախապես ունեցել է πῦρ-ին հանգող ձև: Այս դեպքում πῦρ-ն ակնհայտորեն կենտրոնական նորաբանություն կդիտվի, իսկ ignis-ը ավելի հին ձև է: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ալս անգամ բալթիական լեզուների ձևը իմ կողմից դրված է ավելի հյուսիս, իսկ այլ դեպքերում, պարզության նպատակով, այն գետնի վրա էր գերմանականի և սլավոնականի միջև (փոյուզերենի πῦρ ձևը վկայված է Պլատոնի «Կրատիկոսում», 410 A).

¹ Իր մի հոդվածում (О рефлекс..., „Kwartalnik neofilologiczny“, 24, 1977, էջ 211 և հտ.) պրոֆ. Դ. Խա՛ուկյանը բերում է այն բոլոր բառերը, որոնցում առկա են հ.-ե. ետևալեզվայիններ (велярные, վերջինս նախընտրելի է քմայիններ՝ палатальные անվանումից): Ես նկատել եմ, որ *ghlōros, *gnōmn, *suegno, *klu-dhro-, *akmon, *ak-ri, *swekruos ձևերում ետևալեզվայինին հաջորդում է l, r, m կամ n, և այսպիսով նրանք ընկնում են *gher-, *bheregh-, *kunes, *dik-, *eghr ձևերը կարող են բացատրվել տարբեր կերպ. օրինակ՝ *kr կամ *għr ունեցող զուգահեռ ձևերի առկայությամբ (*bheregh-, *gher- և *eghr հմտ. վեդ. aksā): Որոշ ստուգաբանություններ կարելի է կասկածելի համարել (տե՛ս էջ 212): Փոյուզերենի satəm բնույթը ապացուցելու համար բերած նրա օրինակները շատ ծանրակշիռ ու համոզիչ են:

Համանման պատկեր է ներկայացնում և հայերեն գեա բառը, որի համապատասխանություններն են սլավ. voda, գերմ. Wasser և ալլն (ալլ նախաձևի են հանգում լատ. aqua, գոթ. ahwa): Փուլագերենի ձևը հավանաբար հանգում է *udro-ին (հմմտ. O. Haas, Die phrygischen Sprachdenkmäler, Sofia, 1966, S. 59, 172):

«Մորուք» բառի զուգաբանությունների պատկերը հետևյալն է.

գերմ.	բալթ.	սլավ.	թուր.				
barba	barba	barba	?				
կելտ.	<table><tr><td>ալբ.</td></tr><tr><td>smasru</td></tr></table>					ալբ.	smasru
ալբ.							
smasru							
—							
լատին.	հուն.	հայ.	իբրան.	հնդարիական			
barba	—	smasru	—	smasru			

Հայերեն մաւրուք բառում ստուգաբանական տեսակետից դժվարություն է ներկայացնում ու-ն (տե՛ս Պեղեքսեան, KZ, 39, 1940—45, էջ 349 և 357), բայց ստուգաբանությունն ամբողջությամբ հավաստի է թվում: Ալբաներենն ունի mjekrë (k-ի առկայությունը satëm տիպի լեզվում պայմանավորված է նրան հաջորդող r-ով):

Որոշ դժվարություններ են ծագում «անուն» բառի համապատասխանությունների քննության ժամանակ: Հ.-ե. լեզուների հետևյալ ձևերի՝ լատ. nōmen, հուն. ōnoma, փուլագ. ōnoman, հայ. անուն, անզլ. name, գերմ. name, ալ. naman-, վեդ. nāma, ումբր. nume, խեթ. laman (n-ի տարանմանություններ, ինչպես սարդ. lūmene լատ. nomen-ից), բացատրությունը շատ հեշտ է: Մյուս լեզուների՝ բաղաձայնով սկսվող ձևերի դիմաց հունարենն (ōnoma), փուլագերենն (ōnoman), հայերենն (անուն), ալբաներենն (գեգ. emën, առսկ. emër) լեզուներն ունեն ձայնավոր նախահավելվածով ձևեր: Ձայնավոր է առկա նաև կելտերենում (հին իռլ. ainm), հին ուլմերենում (imē) և պրուսերենում (emmens), բայց ալս դեպքերում այն նախահավելվածային բնույթ չունի և նրա ծագումը մնում է մութ: Այդ պատճառով էլ ես այն զուգաբանություն չեմ համարում, բացի ալբաներենի, հայերենի, հունարենի և թրակերենի ձևերից, որոնց ձայնավորը ակնհայտորեն նախահավելվածային է (տե՛ս եզրային տարածքի օրինակները):

լատ.	հուն.	ալբ.	հայ.	ալ.	հնդարիական
nōmen	ōnoma	emën. emëre	anun	naman-	nāma

Եզրային տարածքի բնորոշ օրինակներ կաբելի է համարել նաև «երեսուն», ինչպես նաև 20—100 թվականները:

լատ.	հուն.	հայ.	իբրան.	հնդարիական
trigintā	triákonta	triákonta	trigintā	trigintā

Միակ համապատասխանությունը պահպանված է հայերենում՝ երեսուն. իսկ այսպես կոչված հյուսիսային լեզուներում առկա են հարաբերականորեն ավելի ուշ շրջանի նորակազմություններ՝ գերմ. dreissig, vierzig և այլն:

Հայերենում պահպանվել է նաև dentem արմատին հանգող առասն ձևը, մինչդեռ սլավոնական, թուրքական և ալբաներեն լեզուներում առկա են gómphos-ին հանգող նորակազմություններ: Նույն ձևով էլ հայերենում չկա սլավոնական լեզուներին հատուկ jedinu na desěte նորաբանությունը, որը առկա է նաև բալթիական, ալբաներեն լեզուներում (որոշ հետքեր կան նաև հունարենում):

Արգելականի մի՛ մասնիկը նույնպես՝ հուն. mē, հայ. մի, թուր. mā, ալբ. mos, իրան. (ավ., հին պարսկ.) ma, վեդ. mā, փուլգ. me (հմմտ. Օ. Haas, նշվ. աշխ., էջ 236) ակնհայտորեն արևելյան զուգաբանություն է (լատ. nē, գերմ. nicht, սլավ. ne և այլն):

Արևելյան տարածքի բոլոր լեզուների համար քնդհանուր զուգաբանություն է որոշ դերանունների տրական հոլովի վերջավորությունը (այդ զուգաբանությունն ընդգրկում է թուրքական, հունարեն, հայերեն՝ -ում, -ում, փուլգերեն լեզուները) և հասնում է մինչև ումբերերեն և գերմանական լեզուները: Ալբաներենում այս վերջավորությունը չի պահպանվել, հավանաբար բոլորովին պատահականորեն:

Երկրորդ դեմքի անձնական *thou գերանունը որոշ լեզուներում բառակցում ունի *tw-. ալբ. ty (ըստ Յոկլի, „Sprache“, 9, 1963, S. 142), հայ. քեզ (*tweghi-ից), հուն. σε, ասլ. բայց նաև σε. ասլ. իրան. θvam, հնդարիական tvām: Ուրիշ լեզուներ բառակցում ունեն *te. լատ. te, գերմ. dich: Նույնը կարելի է ասել նաև «իմքը» գերանվան մասին. լեզուների մի մասում բառակցում հանգես է գալիս *sw- հնչյունախումբը՝ հուն. ἐ *swe-ից, հայ. ինքն, ալբ. u-, վեդ. svayam, բայց լատ. se, գերմ. dich և այլն:

Շատ կարևոր զուգաբանություն է բառակցի հավելվածական e-ն, որը սահմանափակվում է հարավ-արևելյան տարածքով, ընդգրկելով հունարեն, փուլգերեն, հայերեն, իրանական և հնդարիական լեզուները, բայց բացակայում է ալբաներենում: Այն տիպիկ հարավ-արևելյան նորաբանություն է և անկասկած նորաբանություն է, քանի որ վերաբերում է ժամանակի քերականական կարգի որոշմանը, իսկ ժամանակի կարգը ուշ շրջանի երևույթ է, որովհետև հ.-ե. բային նախապես հատուկ էր կերպի քերականական կարգը (կերպի հետքերը պահպանվել են լատիներեն և սլավոնական լեզուներում):

Մյուս կողմից արևելյան տարածքում չկան բալթիական-սլավոնական-գերմանական տարածքին բնորոշ նորաբանություններ, ինչպիսիք են, օրինակ, սլավ. desěti, բայց լատ. decem: Հայերենն ունի decem-ին հանգող առասն ձևը:

Հայերենն առանձնահատուկ դիրք է գրավում հ.-ե. *s-ի արտացոլման տեսակետից: Սլավոնական և հնդիրանական լեզուներում *s դառնում է š i, u, r, k հնչյուններից հետո. հայերենում այն արտացոլվում է իբրև շ միայն r-ից (զարշիմ, վեդ. híšyati) և k-ից հետո (հմմտ. Meillet, Esquisse..., p. 40):

Այսպիսով, հայերենում, բալթիական լեզուների նման, այս նորաբանությունը սկսվել է բայց դեռևս չի ընդգրկել բոլոր դիրքերը:

Հայ-հունական հնչյունական զուգաբանությունները ևս քննել եմ «Mélanges Pedersen», Aarhus—Copenhagen, 1937, էջ 15 և հտ., որտեղ նշել եմ 24 զուգաբանություն: Բառային հիմնական զուգաբանությունները, բացի վերը նշվածներից, թվարկել է Ա. Մեյեն (Esquisse...², p. 142):

Այժմ, հետևելով մասամբ Ա. Մեյենին, կանդրադառնալով մի քանի կարեւոր ձևաբանական զուգաբանությունների քննությանը. դրանք ես նախընտրում եմ անվանել ձևաբանական, չնայած այս տարբերակումը բավական թերորոշ է:

1. Հայերեն կիմ բառը հոգնակիում ունի կանայք ձևը, որն անմիջականորեն կապվում է հունարեն *gynē* «կին» բառի հոգնակի *gynaikes*-ի հետ. հ.-ե. ոչ մի այլ լեզվում հոգնակիի այսպիսի կազմություն չկա:

2. Միայն հայերենում և հունարենում է ձայնավորահիմք գոյականների եզակի գործիականը կազմվում *-bhi վերջավորությամբ. հայ. սիրտ, գործ. սրտի, հուն. (հոմեր.) *īphē* «ուժով»:

3. օ- հիմքով գոյականների ներգոյականը միայն հայերենում և հունարենում է կազմվում *-o-dhi վերջավորությամբ. հայ. տեղաշ (ուղղ. տեղի), հուն. *ouranóthi* «երկնքում»: *-dhi > *-dhy անցումը, որը տալիս է ջ (հմմտ. հայ. մէջ—լատ. *medius*, վեդ. *mádhyah*), միանգամայն բնական է այն լեզուների համար, որոնցում սովորական է ձայնավոր նախահավելվածը, ինչպես l, r, m, n հնչյուններից առաջ, այնպես էլ այլ դեպքերում (առուն, ամիս, առամն և այլն):

4. Միայն հայերենում և հունարենում է «երկու» թվականը վկայված կարճ ծով, հուն. *dýo*, հայ. երկու-տասան (վեդ. *dvā*, հին սլավ. *dŭva* և այլն):

5. Հայերենը և հունարենը ունեն բայական միջածանցով ձևեր՝ հայ. լիանեմ, հուն. *lambano*:

6. *-ou- բայածանցը վկայված է և՛ հունարենում՝ *or-ou-*ծ, և՛ հայերենում՝ մեծաց-ու-ցանեմ (հայերենում ու-ին ավելանում է հ.-ե. մի այլ հաճախադեպ ածանց ևս՝ լատ. *-scō*, հուն. *-s-kō* և այլն):

7. Հունարենում այնքան հաճախադեպ բայարմատի կրկնությամբ բայականությունը հատուկ է նաև հայերենին. հուն. *pam-phainō*, *mar-mairo*, *ōd-ōd-a*, *ēr-ar-e*, հայ. ազ-ազ-իմ, քալ-քալ-եմ, կոչ-կոճ-եմ, հոտ-ոտ-իմ, առ-առ և այլն:

8. Ժխտական բառերը նույնպես նույնն են հայերենում և հունարենում, հուն. *ou*, *ouxi*, *ouch*, հայ. ոչ (հրամայականի արգելականը կամ ժխտականը նույնպես համընկնում են. հուն. *mē* հայ. մի, բայց այս հատկանիշը հանդիպում է նաև արևելյան տարածքի այլ լեզուներում ևս, ինչպես տեսանք վերը):

9. Հայերեն մի բառին ամենանման բառը անկասկած հուն. *mía*-ն է (չպետք է մոռանալ, որ հայերենը սեռ չունի): Իհարկե, հ.-ե. *sem- արմատի համապատասխանություններն առկա են նաև այլ լեզուներում (լատ. *semel*

և այլն), բայց այլուր չի հանդիպում այսպիսի նմանություն: Թե՛ հայերենում, թե՛ հունարենում բառասկզբի sm- (*smij-) հնչյունախումբը պարզեցվել է m-ի (հմմտ. Mél. Pedersen, էջ 22):

Այսպիսով, հայերենը պատկանում է հ.-ե. լեզուների այսպես կոչված հարավ-արևելյան խմբին, ցուցաբերելով ընդհանրություններ հունարեն, փոյուղերեն², իրանական և հնդարիական լեզուների հետ, ընդհանրություններ, որոնց մասին խոսեցինք վերը: Դրանք են.

ա) Բառասկզբի e- ձայնավոր հավելվածը, որը հատուկ է հայերենին և փոյուղերենին. այն ավելանում է միավանկ բառերին, այսինքն այն բառերին, որոնք առանց այդ հավելվածի կլինեին միավանկ. հունարենում նույնպիսի այն ավելանում է առավելագույն միավանկ բառերին:

բ) օ- հիմքով զոյականների սեռականի կազմությունը *-osyo վերջավորությամբ:

գ) s>h անցումը բառասկզբի և միջձայնավորային դիրքերում (այն չի նկատվում հնդարիականում):

դ) Մարդ բառի համար *brotos «մահականացու» իմաստ արտահայտող բառերի առկայությունը, որն ավելի զարգացած մտածողության վկայություն է, քանի որ ժամանակի և անմահության գաղափարի արտահայտություն է (հան. ambrotos, ambrosiē, վեդ. amrtam), մինչդեռ արևմուտքում մարդը հողեղեն, հողածին է, ի հակադրություն երկնաբնականների (caelicolae):

Քանի որ *deiws «աստված» բառը կապվում է Զևսի՝ երկնքի աստծու անվան, dies և լատ. sub diuō «բաց երկնքի տակ» բառերի հետ և քանի որ *deiws բառը հանդիպում է նաև հարավ-արևելյան այն լեզուներում, որոնցում առկա է brotōs (և āmbrotos) բառը, ակնհայտ է, որ homo տիպը, որը հենվում է «հողեղեն» (մարդ) և «երկնաբնակ» հակադրության վրա, ավելի հին է:

ե) *te-ի փոխարեն *twe- և *se-ի փոխարեն *swe, որը քննեցինք վերը⁴:

² Փոյուղերենի մասին մեր ունեցած տեղեկությունները այնքան բիչ են (անգամ 0. Հասսի զրբից հետո), որ մենք հավաստիորեն չենք կարող պնդել *-osyo վերջավորության և s>h անցման առկայությունը այդ լեզվում: Պրոֆ. Զահուկյանը (Kwart. neol., 24, 1977, էջ 211) կարծում է, որ փոյուղերենում վատարվել է s>h անցումը, քանի որ նա բերում է *swe-gno- ձևը որպես փոյուղերեն ouegno-ի նախաձև և swekruros-ձ-ը (էջ 212) որպես փոյուղերեն ouekrō, oukra-ի նախաձև:

³ Այս ձևից բացի հունարենում կա նաև *-o-so<*-o-syo, օրինակ՝ ատտիկյան և պատմական բարբառների մեծ մասում (*-so-ն վկայված է նաև գերմանական լեզուներում՝ des wolles, dog's tail): Այս զուգարանությունը լավ պատկերացում է տալիս հունարենի դիրքի մասին՝ այն գտնվում է կենտրոնական տարածքում, արևելյանի և արևմտյանի միջև:

⁴ Հոգնակիի -f-ն անկասկած հ.-ե. բառավերջի -s-ի արտացոլումն է հայերենում, բայց այն դարձել է հոգնակիի ցուցիչ, այնպես որ մենք չենք կարող ուղղակիորեն համեմատել հայ. բերեմք և բերեմք ձևերը լատ. ferimus, fertis-ի հետ (հմմտ. Pisani, Lezioni di armeno, p. 38): Ես չեմ կարող նկատի ունենալ նաև *-bhi(s), *-bho(s) հարավային զուգարանությունը (լատ., կելտ., հուն., հայ., իրան., հնդարիական), քանի որ դա պարզապես հին երևույթի պահպանում է, ի հակադրություն գերմանական, բալթիական և սլավոնական լեզուների *-mos, *-mes-ի. մեր կարծիքով դրա լավագույն ապացույցն է սլավ. tebē, sebē, որոնցում սուկա է հին *-bhi-ն:

Իբրև եզրակացություն պետք է ասել հետևյալը. հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզուների արևելյան (satəm), ավելի ճշգրիտ՝ հարավ-արևելյան խմբին (հունարեն, հայերեն, իրանական լեզուներ, հնդարիական լեզուներ): Այս արևելյան տարածքում հայերենը դառնում է ամենաարևմտյան տեղը, այնպես որ, հունարենի նման, որը centum խմբի լեզու է, գրեթե միջին դիրք է զբաղում հ.-ե. լեզվաընտանիքում: Հայերենում առկա են հարավ-արևելյան տարածքի բոլոր նորաբանությունները (ավելի մեծ չափով, քան հունարենում): Այն սերտ կապեր չի ցուցաբերում բալթիական, սլավոնական և թուրքական լեզուների հետ, չնայած վերջինները ևս, հայերենի նման, պատկանում են արևելյան խմբին: Հայերենը սերտ առնչակցություններ ունի փյուգլերեն, հունարեն, ինչպես նաև ալբաներեն լեզուների հետ: Այս շրջան լեզուները միավորվում են մի քանի կարևոր զուգաբանություններով: Հայերենի աշխարհագրական տեղաբաշխումը ճշտորեն համապատասխանում է նրա զբաղված լեզվական դիրքին:

ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА СРЕДИ ИНДОЕВРОПЕЙСКИХ

Проф. ДЖУЛИАНО БОНФАНТЕ (Рим)

(Резюме)

Статья представляет собой приложение ареальных принципов неолингвистики к индоевропейским языкам. Это приложение вполне возможно, так как все ученые убеждены в том, что и.-е. языки распространились с ограниченной территории на очень большой ареал, сохраняя первоначальное взаиморасположение (например, иранский между армянским и индоарийским, и т. д.). Используемые принципы таковы: 1) принцип «изолированного ареала» (в нашем случае латинский); 2) принцип «латерального (маргинального) ареала»; 3) принцип «большего ареала». Они должны применяться иерархически: мы не можем, например, применять принцип «латерального ареала» (второй), если центральный ареал — «изолированный». В статье приводятся примеры

5 Եւ չեմ անդրադառնում լատիներեն և հնդարիական լեզուների բազմաթիվ այլ համապատասխանություններին, որոնք նշվել են Վանդրիեսի, Դյումեզիլի և իմ կողմից (օրինակ՝ rex — վեռ. rēj)։ դրանք եզրային տարածքի սկզբների շատ պարզ, ակնհայտ կիրառություններ են, և առ բոլոր դեպքերում հայերենը ցուցաբերում է ընդհանրություններ հունարենի, փյուգլական լեզուների՝ այսինքն կենտրոնական նորաբանությունների տարածքի լեզուների հետ։

из романских языков, что позволяет проверить справедливость этих принципов, поскольку источник романских языков— латинский— нам известен.

Заключение статьи состоит в том, что армянский язык относится к так называемому юго-восточному ареалу (греческий, фригийский, армянский, иранский, индоарийский) на основании трех важных инноваций: 1) аугмент *e-, 2) переход интервокального *s в *h (не наблюдается в индоарийском), 3) генитив на *-osyo для *-o-основ. Армянский язык обнаруживает также особые связи с греческим (гласная протеза), хотя греческий входит в группу centum, а армянский—в группу satem, а также с албанским языком, который занимает западную зону юго-восточной группы и вместе с греческим относится к «центральному ареалу».